

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՐԱՄԱՅԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ <<ՎԵՐՋԻՆ ՉԱՆԳԻ>> ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

25.05.2017



Սիրելի՛ շրջանավարտներ,

Շնորհավորում եմ դպրոցական Վերջին դասի կապակցությամբ:

Այսօր, հրաժեշտ տալով հարազատ կրթօջախին, դուք թողնում եք այնտեղ ձեր պատանեկության հիշարժան ու անմոռանալի տարիները: Միևնույն ժամանակ թևակոխում եք կյանքի մի նոր փուլ, որը լի է պատասխանատվությամբ:

Շնորհավորում եմ նաև մեր ուսուցիչներին, քանզի նրանք կյանք են ճանապարհում մի սերունդ, որին տարիներ շարունակ սիրով փոխանցել են իրենց հարուստ գիտելիքները, դաստիարակել մարդասիրության ու հայրենասիրության սկզբունքներով:

Սիրելի՛ շրջանավարտներ, ևս մեկ անգամ շնորհավորում եմ կարևորագույն այս օրվա կապակցությամբ և մաղթում ձեզ բարի երթ, նորանոր բարձունքների նվաճում ու անխախտ լավատեսություն ամենուր և ամեն պահ: